

ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

(ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԷՍՔԻՉ- ԱՌԱՋԱՐԿ 5.1հա)

Շինարարների փողոցը վերջին տարիներին ամբողջ երկարությամբ անկանոն կառուցապատվել է առևտրի և սպասարկման փոքրածավալ օբյեկտներով՝ աղճատելով փողոցի ճարտարապետությունը: Միաժամանակ այդ կառուցապատումը լրջորեն խոչընդոտում ու վտանգում է փոխադրամիջոցների և հետիոտնի շարժումը:

Առաջարկվում է փողոցի տարածքը ամբողջ երկարությամբ ազատել վերոհիշյալ կառույցներից և հ. 15 վթարային բնակելի շենքի և բացօթյա շուկայի տեղում հիմնել բազմագործառնության համալիր՝ դրա կազմում նախատեսելով հասարակական սպասարկման և առևտրային տարածքներ, ինչպես նաև բազմահարկ բնակելի կառուցապատում, վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղիներ:

Նախագիծը ենթադրում է տարածքում գործող /թվով մոտ 42/ սուբյեկտների մասնակցություն ծրագրի իրականացման գործընթացին՝ ապահովելով նրանց համապատասխան տարածքներով՝ առևտրահասարակական կենտրոնում:

